

առած էր հայուհի մը: Բարեզէպ առիթ մը  
կը ծանօթացնէ զՄովսէս Խանին հետ:

Կը պատմէ Զաքարիա Սարկաւազ (էջ  
53—55), թէ Մովսէս, երբ Երեւան կը գտ-  
նուէր, կը քարոզէր ի Զորագեղ, մերձ ի  
բերդն Երեւանայ: Օր մը քարոզին նիւթ  
կ'ընէ բնարանս. «Կին եթէ ելցէ յառնէ իւրմէ՝  
եւ առցէ այլ՝ չնայ»: Քարոզին ներկայ կը  
գտնուէր Յովհաննէս անուն մէկուն կինը  
Աճափխան, որուն քոյրը՝ կինն էր Ամիրզու-  
նա խանին<sup>6</sup>: Սա գժտած էր իւր ամուսնոյն  
հետ. թէպէտ քահանաներն, նոյն իսկ Ամիր-  
զունա խանը յորդորած էին, որ հաշտուի  
ամուսնոյն հետ, բայց օգուտ չէր ըրած:  
Մովսէս վարդապետի խօսքերը սակայն խո-  
րապէս կ'ազդեն իր վրայ. կը զոյճայ եւ կը  
զգաստանայ: Աճափխանի վրայ տեսնուած  
այս փոփոխութիւնը զարմանք կը պատճառէ  
Խանին, եւ երբ կը հարցնէ պատճառը եւ  
կ'իմանայ թէ վարդապետին խրատները հաշ-  
տեցուցած են զանիկա ամուսնոյն հետ, փա-  
փազ կը յայտնէ ծանօթանալ Մովսէս վար-  
դապետին հետ: Այս առաջին տեսակցութիւնը  
կը հաստատուէ Խանին եւ Վարդապետին մէջ  
բարեկամական յարաբերութիւն:

<sup>6</sup> Էջմ. Թ. 942 ձեռագրին մէջ կը գրէ Մեղիւսէթ  
քահանայ 1621ին. «Յիշեալիք ... եւ զքոյրն իմ զԼիլարն  
որ է ի ձեռն այլազգեաց ի քաղաքն յԵրեւան՝ իշխան  
ոմն Ամիրզունայի տուն գերեցեալ. զոր եւ հաւատով  
ճշմարիտ բրիտանէութիւն առնէ. Տէր Աստուած ա-  
ղաթէ զնայ ի գերութենէ». Հմմտ. Երուանդ Շահա-  
ղիզ, Հին Երեւանը. Երեւան 1931, էջ 74: